ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 263 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ԹԻՎ 204-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն, «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 23-ի թիվ 204-Ն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները և Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի զեկուցագիրը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 204-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 536371.0 հազար դրամ գումարից 23013,489 հազար դրամ վճարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, իսկ 10707,092 հազար դրամը «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին՝ սահմանամերձ համայնքների էլեկտրաէներգիայի և բնական գազի բաժանորդ հանդիսացող բնակիչ-բաժանորդների կողմից 2022 թվականի օգոստոս ամսվա ընթացքում սպառված էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցման նպատակով:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել որոշման կատարումը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

20.09.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ